

Ա.Ռ.Ա.ԲԵԼ. ՆՈԼ.Բ.Ս.ՆԴԵԼ.Ն.

Թիֆլիզում, իւր կեանքի ՅՇ տարին վախճանեցաւ, հայ հասարակութեան ոչ շատ ծանօթ մատենազիր Առաքել Անտոն Նեան Նալբանդեան:

Հանգուցեալը մին եղաւ, և թերևս և միակն հայ ինքնատիպ առակագիրներէ: Նորա առակները երկար տարիների ընթացքում տպուում էին Վենետիկի Միիթարեան «Բազմավիճակ» Հանդիսի մէջ. իսկ 1906 թուին հրատարակուեցան առանձին հատորիկով, նոր և դեռ անտիպ յաւելու մով: Հատորիկի մէջ ամփոփուած են 110 առակներ, որոնցից աւելի քան կէսը ինքնազիր հեղինակութիւն են, իսկ մացեալները համարեա ազատ թարգմանութիւններ կրիլովին՝ Լաֆոնաչի առակներից: Թարգմանութիւնները տաղաչափութեան և լեզուի կողմանէ, վար չեն մուում բուն սկզբնազրերից: Իսկ ինչ որ յատուկ իրան են պատկանում, Նալբանդեանի առակները, ընորոշուում են հարուստ այլարանութեամբ, ճարտարահիւս տաղաչափութեամբ, և խորը բարոյական հետեւութիւններով:

Նալբանդեանի առակների մէջ գործող դէմքերը առաւելապէս կենդանական աշխարհոց առնուած են, բայց յաճախ և բուսական թագաւորութիւնից և այլ ընութեան երեսյթներից (առուակներ, ծովուալիքներ, փոթորիկ և այլն): Առակների լեզուն աւելի մօտենամ է արևմտեան հայ գրական լեզուին, թէ և նշանաւոր չափով կրած է նաև մեր կովկասի գաւառուարարափափառքութիւնը. և յայտնապէս այդ նկատուում է նրա յետնագոյն առակների մէջ, որոնք գրած է Նալբանդեանը կովկասում, ուր եկած էր 1902 թուից սկսած:

Վերապահելով ինձ վերադառնալու կըրկին անգամ առակների ըննադատութեան առանձին յօդուածով, որոնց բաւականաչափ չեն գնահատուած Նալբանդեանի կին-

դանութեան ժամանակ, առ այժմ կը հաղորդներ մի քանի կենսագրական տեղեւկութիւններ նորա մասին:

Նալբանդեան ծնած է Խրիմում, Խարասուբազար քաղաքում. իսկ նորա հայրը Թուրքաց Հայաստանէն այդ տեղ գաղթել էր, և բնիկ Արգուրումցի էր. նորա մայրը Կարա-Մուրզա տանից էր, և հարազատ հօրացոյր հայ հասարակութեան յայտնի երաժիշտ գործիչ Խ. Մ. Կարա-Մուրզայի: Նալբանդեանն իւր նախնական կըրթութիւնն ստացաւ ծննդավայր քաղաքում, հայ Կաթոլիկաց չորս դասարանական ծընթական դպրոցում, իսկ յետոյ Վենետիկում:

Հանգուցեալը տիրապտում էր բայց ի հայ և ոռւս լեզուներից, նոյնական սերէնի և խտալերէնի: Մատենագրութեամբ նա զբաղեցաւ երկրորդարար. վասն, զի ծանրաբեռնած լինելով ընտանեաց հոգսերով, մտածում էր նոցա ապրուստը հայթ-հայթել: Երկար ժամանակ նա ապրեցաւ Միմիկրոպուլում, ուր մօտիկանց մասնակցում էր դպրոցական և եկեղեցական գործերում Հայ Կաթոլիկաց հասարակութեան: Եեաոյ անցաւ Խարկովի երկաթուղային ծառայութեան մէջ; ուր մնաց աւելի քան տասը տարի: Հաստատուելով կաւկասում, Նալբանդեան ապրեցաւ Բագուտում և Թիֆլիսում, և ծառայում էր այլ և այլ հաստատութեանց մէջ:

Առաքել Նալբանդեան հայրն է յայտնի ջութակահար Յովհաննէն Նալբանդեանի՝ որ ներկայումս ջութակահարութեան ուսուցիչ է Պետերբուրգի կոնսերվատորիում, որն որ իր երաժշտական ուսումը ստացաւ հօրը ինայած չափաւոր միջոցներով. հայրը զրկում էր զինքը, տաղանդաւոր զաւակին տալու անհրաժեշտ զարգացումը արուեստին մէջ:

Որդու յառաջադիմութիւնն և համբաւ միմիթարութեամբ լեցուց ծեր հօր սիրտը:

Պ. Կ.*

* «Բագու» լրագիր. Թիւ 214 - թարգմ. Ռուսերէնից: